

3.

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**ECONOMICS**  
**ЭКОНОМИКА**

**ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ  
ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

**ՀԱԿՈՔՅԱՆ ԱՆԱՀԻՏ**

*ԳՊՀ դասախոս*

Համաշխարհային իրականության մեջ գլոբալացման շնորհիվ տարբեր երկրների միջև օրըստօրե ընդլայնվում են գործարար, առևտրային, գիտական, կրթական, մշակութային համագործակցությունը և այլ բնույթի կապերն ու հարաբերությունները: Այս ամենը պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների ու տեխնիկական միջոցների սրընթաց զարգացմամբ ու կատարելագործմամբ, որն էլ իր հերթին լայն թափով մեծացնում է տեղափոխությունների ապահովումն ու շփումների հնարավորությունները: Այս ամենից բնականաբար անմասն չեն մնացել նաև հաշվապահական հաշվառման առնչվող հիմնախնդիրները: Պատահական չէ, որ հաշվապահական հաշվառումն անվանում են գործարարության լեզու՝ արտահայտչամիջոց, որն արդեն միջազգային բնույթ է ձեռք բերել: Գործարար և առևտրային շփումները տարածվելով ու ընդլայնվելով դուրս են եկել երկրի, աշխարհամասերի ու մայրցամաքների սահմաններից: Այլ կերպ ասած՝ գործարար շփումներն այլևս սահմաններ չեն ճանաչում: Այստեղից էլ բխում է ժամանակի հրամայական պահանջը՝ գործարարների, մասնավորապես ներդրողների համար հաշվապահական հաշվառման ամփոփ տեղեկատվությունը հստակեցնել, պարզեցնել, դարձնել առավելագույնս մատչելի ու հասկանալի:

Հաշվապահական հաշվառման հիմնական գործառույթը ֆինանսական տեղեկատվության ամփոփումն է: Ընդ որում հաշվապահական հաշվառումը թույլ է տալիս ստանդարտացնել կազմակերպության գործառնությունների արտացոլումը՝ անկախ նրա տեսակից, ինչպես նաև այն հանգամանքից, թե ով է օգտագործելու տեղեկատվությունը: Հաշվապահական տեղեկատվությունը օգտագործողների շատ մեծ շրջանակ ունի՝ առկա և պոտենցիալ ներդրողներ, աշխատակիցներ, վարկատուներ, հաճախորդներ, կառավարման մարմիններ և այլն: Ֆինանսական հաշվետվությունների նպատակն ու խնդիրներն են այնպիսի տեղեկատվության ներկայացումը, որը

- օգտակար կլինի ներդրումների և վարկերի տրամադրման վերաբերյալ որոշումների կայացման համար,
- կօգնի օգտագործողներին գնահատել դրամական միջոցների հետագա շարժը,
- կարտացոլի տնտեսական ռեսուրսների փոփոխությունները:

Հաշվապահական հաշվառման սկզբունքներն աշխարհի տարբեր երկրներում նույնը չեն: Սկզբունքների տարբերությունները պայմանավորված են տնտեսական գործունեության մեջ առկա կազմակերպարավական տեսակներով, ինչպես նաև հաշվառման կիրառման վրա արտաքին գործոնների ազդեցությամբ (տնտեսական, քաղաքական, սոցիալական, աշխարհագրական):

Արտերկրում հաշվապահական հաշվառման համակարգի վրա ներգործում են բազմաթիվ գործոններ: Քանի որ տարբեր երկրներում գործում է ազգային տնտեսական շուկայական համակարգը, այստեղից էլ հաշվապահական հաշվառման համակարգը ենթարկվում է բազմաթիվ անկախ գործոնների ազդեցությանը: Այս ամենը հիմնված է այն բանի վրա, որ ամեն մի երկիր ունի իր պատմությունը, մշակույթը, սովորությունները, ինչպես նաև առանձին հաշվապահական հաշվառման համակարգ և հաշվառման սեփական մեթոդները, որոնք տարածվում են հիմնական միջոցների, դրանց մաշվածության, հաշվառման ձևերի վրա:

Հասարակության պատմական զարգացման ընթացքում մշտապես կատարելագործվել է ազգային հաշվապահական հաշվառման համակարգը: 20-րդ դարի վերջում ձևավորվել են 100-ից ավելի հաշվապահական հաշվառման համակարգեր, որոնք օգտագործվել են տարբեր երկրների կողմից:

Ուսումնասիրությունները, որոնք կապված են սոցիալական միջավայրի գործոնային ուսումնասիրության հետ, ցույց են տալիս, որ տարբեր երկրներում տարբեր գործոններ հաշվառման համակարգի վրա ազդում են տարբեր ձևով, և դրանց ազդեցությունն ու դրանց հետևանքով փոփոխություններն առավել կարևոր են հատկապես զարգացող երկրների համար: Այսպես, օրինակ, ազգային հաշվապահական հաշվառման համակարգի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարբեր երկրներում կիրառվել են միասնական հաշվառման մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս ճիշտ ժամկետում արդյունքների որոշման և ակնկալվող շահույթի գումարի մեծությունը որոշակի պայմաններում սահմանելու համար:

Յուրաքանչյուր երկիր ունի իր մշակույթը, մշակութային արժեքները, քաղաքականությունը, բացի դրանից՝ նաև իր երկրին համապատասխան հաշվառման համակարգը: Հետևաբար յուրաքանչյուր երկրում կիրառվում են

իր կողմից մշակված մեթոդները ապրանքանյութական պաշարների, արտադրական ռեսուրսների, ակտիվների մաշվածության հաշվառման, արտարժույթով վերահաշվարկման և այլ բնագավառներում:

Տարբեր հաշվապահական հաշվառման համակարգերի գործոնները և դրանց ազդեցություններն առաջացնում են տարբեր տեսակի խնդիրներ, որոնք էլ պատճառ են հանդիսանում ընտրելու հաշվապահական հաշվառման համակարգերից ամենսարդյունավետը:

Որոշ երկրներում ազգային հաշվառման համակարգում կիրառվել է այնպիսի մեթոդ, որի դեպքում արտադրական շուկայում ակտիվացել է ազգային տնտեսությունը (Ավստրիա, Բելգիա, Շվեյցարիա և այլն):

Կան նաև այնպիսի գործոններ, որոնք կիրառվում են միայն տվյալ երկրում: Օրինակ՝ ԱՄՆ-ում արգելվում է կատարել ոչ նյութական ակտիվների մաշվածության հաշվառում:

Սակայն ազգային հաշվառման համակարգերի բազմազանության վրա ներգործում են ավելի ընդհանուր գործոններ, որոնք երկրում ձևավորում են տիրող իրավիճակից բխող սոցիալ-տնտեսական հարաբերություններ, որի հետևանքով առաջանում է բարձր ինֆլյացիա: Ելնելով բարձր ինֆլյացիայից, որը հաճախ առկա է Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի երկրներում, անհրաժեշտ է հաշվապահական հաշվառման համակարգում իրականացնել փողի արժեզրկման հետևանքով առաջացած խնդիրների կարգավորման գործընթաց, որի համար հաշվարկվում է արժեզրկման ինդեքս: Որոշ երկրներում հաշվետվությունները ներկայացնելիս հաշվարկը պետք է կատարեն գների ընդհանուր ինդեքսով: Շատ երկրներում այդպիսի երկարաժամկետ կարգավորումը ներգործում է ակտիվների վրա, որի հետևանքով բարձրանում են հարկային դրույքաչափերը:

Ի դեպ նշենք, որ ինչպիսին էլ լինի ազգային հաշվապահական հաշվառման համակարգերի տարբերությունը, կա շատ կարևոր նմանություն: Այդ նմանությունը բացահայտվել է շատ դարեր առաջ, երբ առաջացավ դեբետ և կրեդիտ գաղափարը, որն իսկապես հիմնարար է, և հաշվառման վարումը մինչ օրս իրականացվում է կրկնակի գրանցման սկզբունքով:

Համաշխարհային իրականության մեջ ձևավորվել են հաշվապահական հաշվառման իրավական կարգավորման երկու ուղղություն: Դրանք իրարից տարբերվում են օրենսդրության տեսակով և նրանց ներգործության աստիճանով:

Առաջին ուղղության մեջ այն երկրներն են, որոնք ունեն հաշվապահական հաշվառմանն առնչվող բազմաճյուղ օրենսդրություն: Այս դեպքում օրենքները կրում են խիստ որոշակի բնույթ, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են խստորեն հետևել օրենքի տառին:

Այս երկրների մեծ մասում հաշվառման ստանդարտները պետական օրենքների շարքին են դասվում:

Հաշվապահական հաշվառման գլխավոր խնդիրը համարվում է պետական հարկերի հաշվառումը և դրանց հաշվարկման և հարկման նկատմամբ հսկողության իրականացումը: Տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը իրականացվում է «Թույլատրվում է այն, ինչ թույլատրվում է» սկզբունքով: Այս երկրներից են Արգենտինան, Գերմանիան, Ֆրանսիան:

Երկրորդ ուղղության մեջ այն երկրներն են, որոնք կիրառում են ընդհանուր իրավական կողմնորոշման օրենսդրություն: Երկրների երկրորդ խմբում կարգավորումներն իրականացվում են ընդհանուր իրավունքի նորմերի սահմանումով, որը ներկայացվում է մի շարք «դուք չպետք է» սահմանափակումով: Այս դեպքում օրենքները մատնանշում են այն սահմանները, որոնց շրջանակում ֆիզիկական և իրավաբանական անձինք ունեն ազատ գործելու հնարավորություն: Հաշվառման ստանդարտները չեն կարգավորվում օրենսդրորեն, այլ սահմանվում են տարբեր հաշվապահական մասնագիտական կազմակերպությունների կողմից: Միաժամանակ այդ ստանդարտներն առավել ճկուն են, ավելի հեշտությամբ ենթակա նորամուծությունների ազդեցությանը: Սկզբունքը հետևյալն է՝ «Արգելվում է այն, ինչը չի թույլատրվում»: Այս երկրներից են Մեծ Բրիտանիան, ԱՄՆ:

Շատ մասնագետներ նշում են, որ աշխարհում հնարավոր չէ միանման հաշվառման համակարգերով երկու երկիր գտնել: Սակայն հաշվառման համակարգերն ունեն ընդհանրություններ հաշվառման համակարգի սոցիալ-տնտեսական պայմաններում: Ուսումնասիրելով հաշվապահության վարման և ֆինանսական հաշվետվություն կազմելու կարգը Եվրոպայում, Ամերիկայում և Ասիայում՝ կարելի է առանձնացնել հաշվառման համակարգերի մեծ թվով դասակարգումներ: Առավել հայտնի են հետևյալ մոդելները՝ բրիտանաամերիկյան, մայրցամաքային (կոնտինենտալ), հարավամերիկյան (լատինաամերիկյան), իսլամական, միջազգային (ինտերնացիոնալ): Յուրաքանչյուր մոդել ունի իր առանձնահատկությունները:

Հաշվառման **բրիտանաամերիկյան** մոդելի սկզբունքները մշակվել են Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և Հոլանդիայում: Մոդելին բնորոշ չէ հաշվառման կոշտ կարգավորումը: Պետության կողմից հաշվառման օրենսդրորեն կարգավորումը և ներգործությունը տնտեսվարողների վրա հասցրված է նվազագույնի: Հաշվառումն այս դեպքում կարգավորվում է մասնագիտական կառույցի կողմից՝ հիմք ընդունելով իրական կյանքում առկա դրականն ու բացասականը: Այսինքն՝ հաշվապահական հաշվառման լավագույն ու բազմափորձ մասնագետները միավորվում են և մշակում հաշվառման հիմնարար սկզբունքները, իսկ պետությունն ընդունում է դրանք:

Հիմնական գաղափարն այն է, որ հաշվառումը հիմնականում նպատակ ունի ներդրողներին, վարկատուներին և բաժնետերերին ապահովել հետաքրքրող տեղեկատվությամբ: Հաշվառման այս մոդելը հետագայում տարածվեց Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի նախկին գաղութներում, ինչպես նաև առևտրային գործընկերների շրջանում: Այն ներկայումս օգտագործվում է Ավստրալիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Իռլանդիայում, Սինգապուրում, Վենեսուելայում, Իսրայելում, Ինդոնեզիայում, Հնդկաստանում, Հոնգկոնգում, ՀԱՀ-ում, Կիպրոսում, Մեքսիկայում, Ֆիլիպիններում, Պակիստանում, Պանամայում և այլ երկրներում: Այս մոդելին է հարում նաև Հոլանդիան, սակայն նրան բնորոշ է ոչ թե գործնականից տեսականին անցումը, այլ ընդհակառակը, տեսականից գործնականին անցումը:

Հաշվապահական հաշվառման **մայրցամաքային** մոդելի տարբերակիչ առանձնահատկությունը պահպանողականությունն է և հաշվառման օրենսդրորեն խիստ կարգավորումը: Այն բնորոշ է հիմնականում Եվրոպայի երկրներին: Եվրոպական երկրներում գործարարությունը սերտ կապեր ունի պետության, բանկերի հետ, որոնք հիմնականում բավարարում են խոշոր ընկերությունների կարիքները: Հաշվառման քաղաքականությունը միտված է առաջնահերթ կառավարության պահանջների բավարարմանը հատկապես հարկազանձման առումով: Այս մոդելը կիրառում են Ավստրիան, Ֆրանսիան, Գերմանիան, Շվեյցարիան, Շվեդիան, Դանիան, Բելգիան, Նորվեգիան, Հունաստանը, Իսպանիան, Իտալիան, Պորտուգալիան, Լյուքսեմբուրգը, ինչպես նաև Ալժիրը, Անգոլան, Գվինեան, Եգիպտոսը, Կամերունը, Մարոկկոն, Մալին, Ճապոնիան և այլն:

Հաշվապահական հաշվառման **հարավամերիկյան** մոդելը հիմնականում տարածված է իսպանալեզու երկրներում, որոնք ունեն պատմական զարգացման և ավանդույթների ընդհանրություններ: Քանի որ այս երկրներին բնորոշ էր սղաճը, ապա հաշվապահական հաշվառման այս մոդելի ձևավորման վրա էական ազդեցություն ունեցավ հաշվետվությունների ցուցանիշների ճշգրտումների մեթոդը: Հիմնական առանձնահատկությունը գնաճի տեմպերի վրա հաշվառման տվյալների մշտական ճշգրտումն է: Ընդհանուր առմամբ հաշվառումը նպատակաուղղված է պետական պլանային մարմինների կարիքների բավարարմանը, իսկ հաշվառման մեթոդիկան միասնականացված է: Հարկազանձման նախանշված տվյալների ապահովման նկատմամբ հսկողության համար անհրաժեշտ տեղեկատվությունը մանրամասնորեն արտացոլվում է հաշվառման և ֆինանսական հաշվետվության մեջ: Այս մոդելն օգտագործում են Արգենտինան, Բրազիլիան, Բոլիվիան, Պարագվայը, Ուրուգվայը, Պերուն, Չիլին, Էկվադորը և հարավամերիկյան այլ երկրներ:

**Իսլամական** մոդելը մշակվել է Աստվածային գաղափարների մեծ ազդեցության ներքո: Մասնավորապես մյուս մոդելներից տարբերվում է հաշվառման տեղեկատվության բացահայտման հարցերով: Դրա հետ կապված՝ նշվում են մի շարք առանձնահատկություններ.

- հաշվառման սոցիալական ուղղվածությունը,
- տեղեկատվության լիարժեք բացահայտումը,
- կրոնական կանոնների հսկայական ազդեցությունը հաշվառման վրա,
- ակտիվների և պարտավորությունների գնահատման ժամանակ շուկայական արժեքին տրվող նախապատվությունը,
- արգելվում է ձեռք բերել ֆինանսական դիվիդենդներ իրենց սեփական շահի համար և այլն:

Ամփոփելով հաշվապահական հաշվառման իսլամական մոդելի կառուցվածքը՝ պետք է ընդգծել, որ նրա հիմնական առանձնահատկությունը տարբերությունն է մյուս մոդելների տնտեսագիտական նորմերից: Վերը նշված հաշվառման մոդելները սահմանվում են որպես իրավական: Իսկ հաշվառման իսլամական մոդելը բնութագրվում է որպես կրոնական: Տնտեսագիտական տեսանկյունից այս մոդելի գլխավոր տարրը կարելի է համարել արգելքը գործունեության մի շարք տեսակների գծով՝ եկամուտ ստանալու նպատակով: Գերակա է համարվում սոցիալական արդարության սկզբունքը, որը տարածվում է մուսուլմանների կյանքի բոլոր ոլորտների վրա:

**Միջազգային** մոդելը համեմատաբար նոր է զարգացում ապրում, սակայն աստիճանաբար ավելի ու ավելի մեծ կիրառություն է գտնում: Մոդելի զարգացման անհրաժեշտությունը բխում է հաշվապահական հաշվառման միջազգային միասնականացման անհրաժեշտությունից: Այն առաջին հերթին բազմազգ կորպորացիաների և միջազգային արժույթային շուկաներում օտարերկրյա մասնակիցների շահերն է պաշտպանում: Ոչ մեծ թվով խոշոր կորպորացիաներն են այժմ իրենց հաշվառումն ու հաշվետվությունն իրականացնում միջազգային մոդելին համապատասխան: Սակայն իրականում նրանց թիվն աճում է շատ արագ տեմպերով:

Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ներդաշնակությունն ապահովելու նպատակով նախորդ դարի 70-ականների սկզբում ստեղծվեց Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) կոմիտեն: Այն ստեղծվեց մի շարք առաջավոր, զարգացած երկրների (Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ, ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա և այլն) արհեստավարժ հաշվապահների կազմակերպությունների համաձայնության հիման վրա, որոնց կողմից սկսվեց ՀՀՄՍ-ների մշակման գործընթացը: ՀՀՄՍ կոմիտեի նպատակը

հաշվապահական հաշվառման ստանդարտների ստեղծումը, հրապարակումը և կատարելագործումն է, աշխարհի տարբեր երկրներում դրանց ընդունմանն ու պահպանությանն օժանդակելը: ՀՀՄՍ-ները չեն սահմանում հաշվապահական հաշվառման վարման կարգը: Դրանք նկարագրում են ակտիվների ու պասիվների գնահատման ընդհանուր կանոնները և տեղեկատվության ներկայացումը ֆինանսական հաշվետվություններով: Իր գործունեության ընթացքում այն հասցրել է մշակել 41 ՀՀՄ ստանդարտ, որոնցից ներկայումս գործում են 28-ը: 2001 թվականից սկսվեց ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) մշակումը, և ներկայումս առկա են թվով 13 ՖՀՄՍ-ներ:

Ընդհանրապես ստանդարտները հասկանալու և կիրառելու գործում կարևոր նշանակություն ունի «Հայեցակարգային հիմունքներ» փաստաթուղթը, որը ՀՀՄՍ խորհրդի կողմից հրապարկվել է 2010 թվականին: Այն փոխարինում է «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքներ» փաստաթղթին: Նույն նպատակին են ծառայում նաև ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) կամ նախկին մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) կողմից մշակված մեկնաբանություններ: Ե՛վ «Հայեցակարգային հիմունքները», և՛ մեկնաբանությունները չեն համարվում ստանդարտ և իրավական ուժ չունեն, սակայն դրանք օժանդակում են ստանդարտների որոշակի դրույթների պարզաբանմանն ու հստակեցմանը:

Միջազգային ստանդարտները ներկայումս ընդունվել են ավելի քան 120 երկրների կողմից և շարունակում են տարածում գտնել ու կիրառվել: Որոշ երկրներում դրանք դեռևս գործում են տվյալ երկրի ազգային ստանդարտների կիրառմանը զուգահեռ: Առաջիկայում՝ շատ մոտ ապագայում, անխուսափելի է միջազգային ստանդարտների ընդունումը աշխարհի եթե ոչ բոլոր երկրների, ապա վստահաբար նրանց գերակշիռ մասի կողմից:

***Քանալի բառեր՝ հաշվառման մոդել, հաշվառման տեղեկատվություն, հաշվառում և հաշվետվություն, ներդրողներ, ֆինանսական հաշվառման տվյալներ, հաշվառման օրենսդրորեն կարգավորում, հարկազանձում, շուկայական արժեք, հաշվառման հիմնարար սկզբունքներ, միջազգային ստանդարտ:***

### **Օգտագործված գրականություն**

1. Бабаева З.Ш., Сущность и характеристика международной системы учета и отчетности. 2015г.
2. Журова Л.И., Ломакин А.Н., Финансовый анализ деятельности корпорации, 2010г.
3. Поленова С.И., Предпосылки международной стандартизации бухгалтерского учета и отчетности. 2008г.
4. [www.auditpro.am/en/standardsam/commentariesam](http://www.auditpro.am/en/standardsam/commentariesam)
5. [www.google.ru](http://www.google.ru)

## SOME ISSUES OF ACCOUNTING IN THE FOREIGN COUNTRIES

**НАКОБЯН АНАИТ**

*GSU lecturer*

There are no two countries with identical accounting systems in the world. Considering accounting systems and financial statements' preparing method in the countries of Europe, America and Asia, it is possible to distinguish several classifications of accounting systems. The financial statements from companies from around the world typically reflect the cultural values and economic climate of their country. Therefore, great companies prepare financial statements that are in accordance with International Financial Reporting Standards.

**Key words:** *accounting model, accounting information, accounting and statement, investors, financial accounting data, legislative regulation of accounting, taxation, market price, basic principles of accounting, international standards.*

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ УЧЕТА В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ

**АКОПЯН АНАИТ**

*Преподаватель ГГУ*

В мире не существует двух стран с идентичными системами учёта. Рассмотрев ведение бухгалтерского учёта и порядок составления бухгалтерской отчётности в странах Европы, Америки и Азии, можно выделить множество



классификаций систем бухгалтерского учёта. Финансовые отчеты компаний разных стран мира отражают культурные ценности и экономический климат своей страны. И крупные компании представляют отчеты в соответствии с МСБУ или МСФО.

**Ключевые слова:** модель учета, учет информация, учет и отчетность, инвесторы, данные финансового учета, законодательное регулирование учета, налогообложение, рыночная стоимость, основные принципы учета, международный стандарт.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 09.03.2019թ.:  
Հոդվածը գրախոսվել է 13.04.2019թ.: